ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 145-Ա

ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով,հիմք ընդունելով Թումանյան համայնքի Թումանյան, Աթան, Ահնիձոր Լորուտ, Մարց, Շամուտ, Քարինջ բնակավայրում գիշերային լուսավորության բարելավման աշխատանքների շահագործման ընդունումը (գնման պայմանագիր՝ <<ԼՄԹՀ-ԳՀԱՇՁԲ-19/04>>)՝
որոշում եմ.

1.Ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.
1/ Երվանդ Շաքարյան - Թումանյան համայնքի ղեկավարի տեղակալ,
2/ Թորոսյան Նորիկ - <<Թումանյան քաղաքի կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի տնօրեն,
3/ Կարեն Քառյան - Աթան բնակավայրի վարչական ղեկավար,
4/Հայկ Քառյան - Ահնիձոր բնակավայրի վարչական ղեկավար,
5/ Բեգլարյան Հովնան - Լորուտ բնակավայրի վարչական ղեկավար,
6/ Ռոբերտ Գալստյան - Մարց բնակավայրի վարչական ղեկավար,
7/Բաղիշ Վանյան - Շամուտ բնակավայրի վարչական ղեկավար,
8/ Նորիկ Մկրտումյան - Քարինջ բնակավայրի վարչական ղեկավար,
9/ <<Հիդրոգազշին>> ՍՊԸ-ի հեղինակային հսկողություն իրականացնող ներկայացուցիչ Սամվել Քոչարյան /համաձայնությամբ/,
10/ <<Տեխպրոյեկտ>> ՍՊԸ-ի տեխնիկական հսկողություն իրականացնող ներկայացուցիչ Գ. Գուլանյան /համաձայնությամբ/,
11/ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ Ալեքսանդր Հարությունյան /համաձայնությամբ/,
12/ՀՀ քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Լոռու տարածքային բաժնի քաղաքաշինական գործունեության վերահսկողության գլխավոր մասնագետ Աշոտ Նալբանդյան /համաձայնությամբ/

2.Հանձնարարել հանձնաժողովին՝ ուումնասիրելու և կազմելու ավարտված շինարարական օբյեկտի շահագործման ընդունման ակտը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2019 թվականի N 146

ՀՈՎԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով ,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հաշվի առնելով Հովիկ Հովհաննիսյանի և համասեփականատերեր՝ Ռուզաննա,Լիաննա,Սլավիկ և Նելլի Հովհաննիսյանների կողմից /մուտք 2019 թվականի դեկտեմբերի 27-ին թիվ 450/ հողամասերիից հրաժարվելու մասին դիմումը՝
որոշում եմ

1.Սեփականության իրավունքով Հովիկ Հովհաննիսյանին և համասեփականատերեր՝ Ռուզաննա,Լիաննա,Սլավիկ և Նելլի Հովհաննիսյաններին պատկանող գյուղնշանակության 0,72 հա մակերեսով վարելահողը (ծածկ.06-085-134-000047, վկ.1323927 տրվ. 31.03.2004թ.), 0,68 հա մակերեսով վարելահողը (ծածկ.06-085-134-000012, վկ. 1323920 տրվ. 31.03.2004թ.), 0,82 հա մակերեսով վարելահողը և 0,79 հա մակերեսով խոտհարքը (ծածկ.06-085-191-000002, վկ. 1323922 տրվ. 31.03.2004թ.) և 0,68հա մակերեսով խոտհարքը (ծածկ.06-085-134-000022, վկ.1323924 տրվ. 31.03.2004թ.)ճանաչել համայնքային սեփականություն:
2.Հանձնարարել համայնքապետարանի 1-ին կարգի մասնագետ Էդգար Պետրոսյանին 15-օրյա ժամկետում դիմել ՀՀ ԿԱ ԱԳ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում,սույն որոշումից ծագող իրավունքները պետական գրանցման ներկայացնելու համար:
3.Հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ